

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմ 10 րուր, կես տարվան 6 րուր:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից ամսագրատուն մեջ:

Օտարապետները դիմում են ուղղակի

Դիմում. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաջտան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից)

Ցայտարարությունը ընդունվում է ամեն ինչով:

Ցայտարարությունը ընդունվում է ամեն ինչով:

Խմբագրատունը բաց է առաջտան 10—2 ժամ

ԲՈՎԱՆՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսումնային և Թիֆլիսի Ներքին Լուսինքն—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիկան Թեմական—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Մեր ժողովրդական գրականությունը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍՍԱԿԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Որչափ կարողացայ նկատել այս երկու ամսուայ ընթացքում և Պոլսի գտնվելովս, լրագրական յոգուածներ կարողալ տեղիս Հայ հասարակութեան համար գտած է մի այնպիսի վաղանցուկ ու բուրբական գուարձութիւն, որը ստանում են փափկաբարձ Պոլսեցիք իրանց արձարաններում նարգիլէի ծուխը վայելելով: Բայց ազգարարում եմ նախապէս, որ այս մի քանի տողերով ես բնուած մտադրի չեմ մի այդպիսի գուարձութիւն տալ ձեր ընթերցողներին, այլ մտադրի եմ խօսել նոցա հետ մի կարեւոր հարցի մասին, որին կրկին վերադառնալը հազիւ թէ կարող է տեղի ունենալ միւս անգամ: Խօսքս ձեր այս տեղի, այսպէս ասուած «Հասարակական գործիչներին» վրա է, որոնք չեն նայելով իրանց գործունեութեան արդիւնքի ունեւածութեան, այնչափ բազմաթիւ են որչափ իրենքի աստիճանը և ծովի աւազը: Այդ բազմաթիւ «գործիչները» խմբուած են գանապան արանց և կանանց ընկերութիւնների մէջ, որոնցից իւրաքանչիւրը ունի իր տպագրութեան առանձին կանոնադրութիւնը, իսկ նորա մէջ Ներսէս Պատրիարքի օրհնալից հոգեւորականութիւնը:

ԲԱՆԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:

ԲԱՆԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բախան եմ անում մօտ սարին, Մատաղ ընեմ իմ եարին (սիրածին), Մէկին է արծաթէ քամար, Մեւնեմ ունեմ կամարին: Ուրաքս սարքած սրած, Մաշեկս սարքած կարած, Գնբուշ կարմիր էրեւս (երես), Եարին էրեւսն դրած: Բախանում եմ կնիքի, Հազած եմ լաւ խաւ չիթը, Երեւել ընեմ էն օրին, (Որ) կանեն մեր հարսնիքը, Վրցիս կան է վրցիքը, (Թող) կարդի սրտիս խօցը, Երեւել կրտսմ էն օրին, (Որ) եարս կը մանի ծոցս: (Նուշպէս) * բաղ ու բաղին բար (բերք) պըտի, (Նուշպէս) վարդի ծառին վարդ պըտի, (Անշպէս էլ) ընձի (ինձ) նման աղջկան, Մէկ լաւ սիրուն եար պըտի:

*) Ժողովուրդը համեմատութեան ժամանակ բայց է թողնում բառեր. ուստի շատ անգամ երգերի միտքը միմյանում է և չէ հասկանալով: Այս պատճառով մենք փակագրծներով մէջ դնում ենք համեմատական բառերը և չաղկապները:

Նալից հոգեւորականութիւնը: Գիցուք թէ Ներսէս Պատրիարքը չի կարող չօրհնել ամեն մէկին որ կը դիմէ նորան. բայց ի՞նչ արդիւնք են արտադրում Հայաստանի բարօրութեան համար օրհնած ջրով սրսկուած այդ բոլոր ընկերութիւնները: —Ահա՛ այդ է հետաքրքիր խնդիրը: Հէնց այս մասին եմ հարկաւոր համարում խօսել և Պոլսի լրագրութեան մէջ:

Ահա՛ երկու տարի է, որ և Պոլսի մէջ սկսվել են յայտնվել բազմաթիւ եռամսհոտ երիտասարդներ, որոնք ազնիւ և ազգօգուտ զգացմունքներից զրգուած, սկսել են զանազան ընկերութիւններ հաստատել «Հայաստանի մէջ լուսաւորութիւն տարածելու համար»: Որովհետեւ խօսքս մի այնպիսի գործի վրա է, որը հաւատարմաբէս մօտիկ է աշխարհի ամեն կողմի Հայերի սրտին, փաներոյ բնական է, որ միլիոն ու կէս Ռուսահայերը ևս անտարբեր չէին կարող մնալ իրանց և Պոլսի ազգայինների ջանքերին, այլ պիտի ածապարէին օժանդակել նոցա իրանց նիւթական նպաստներով, որոնցից կախուած է գլխաւորապէս՝ կարծեմ մինչև հիմա էլ՝ և Պոլսի գործիչների նպատակները յաջողութեամբ պատկերել: Բայց որովհետեւ Ռուսահայերից նպաստներ ձեռք բերելու համար հարկաւոր էր անշուշտ լրագրական պրօպագանդային (ծառնում) դիմել, փաներոյ Ռուսահայ լրագրութիւնը հէնց առաջին օրից ամենայն եռանդով ձեռնամուխ եղաւ գործի պրօպագանդային, որի արդիւնքը այնչափ եղաւ, որ մի քանի ամսուայ ընթացքում միայն «Մշակ» լրագրի խմբագրութիւնը կարողացաւ հասցնել «Արարատեան ընկերութեան» մօտ 17 հա-

զար բուր: Բայց երբ վրա հասաւ անցեալ տարի Հայաստանին մի այնպիսի սպառնալից վտանգ, ինչպէս սովոր էր, փաներոյ լրագրութեան և բոլոր հասարակութիւնը թուովեց առ ժամանակ «Հայաստանի լուսաւորութեան» հարցը և իր բոլոր բարոյաւ կան և նիւթական ուժերը նուիրեց սովի հարցին: Թէ որչափ յաջողութեամբ պատկերվեց մեր լրագրիչների ջանքը այդ կողմից, դիմե՛ք և Պոլսի սովորեց մասնաժողովը: Բայց երբ սովը սկսեց նուազել, Ռուսահայ մամուլը, ի հարկէ, իր ուշադրութիւնը կրկին պիտի նուիրէր և Պոլսի վերջին լրագրիչներին և ընկերութիւններին գործին, հաւաստի լինելով որ այդ ընկերութիւնների գործը այնչափ կանոնաւոր և փտահիշի ընթացքի մէջ է, որ կարելի է բոլորովին հանգիստ խղճմամբով շարունակել ընկող կտորի խեղճ Ռուսահայերի գլխին, ստիպելով նոցա անդադար բաց պահել իրանց քսակները և Պոլսի գործիչների համար: Բայց, աւաղ, երկու ամիս և Պոլսի ընթանկով և ի մօտոյ ծանօթանալով այս տեղի գործիչներից առաջաւորներին, ինչպէս և նոցա գործի ներկայ (երեւի և ապագայ) ընթացքի հետ, ևս հասայ այն տխուր եզրակացութեան, որ և Պոլսի գործիչների վրա գրած մեր փտահիշութիւնը այնչափ չափազանցաբար է եղել, որ մի տեսակ բարոյական յանցանք ենք գործել այնչափ խիստ յանդիմանքներ թափել խեղճ Ռուսահայ հասարակութեան երեսին, մեզ զարկելով նորան անտարբերութեան մէջ դէպի իր հայրենեաց բարօրութիւնը: Եւ յիշաւ ի՞նչ որչափ են արժանի և Պոլսի գոր-

ծիչները Ռուսահայերի համակրութեան և օժանդակութեան, տեսնե՛ք:

Ամբողջ երկու տարի է, որ և Պոլսի ընկերութիւններից զինաւորը մեզ հետ գրաւոր յարաբերութիւն ունի, և կարծեմ միւսն էլ մի անգամ յատուկ պատուիրակ ուղարկեց Ռուսահայերի մօտ նորոնց հետ անձամբ խօսելու համար, բայց որ ժամանակ են մտածել և Պոլսի երիտասարդ գործիչները մեզ մարդավայել տեղեկութիւններ տալու իրանց ամենօրուայ գործունեութեան վրա, որով Ռուսահայ մամուլը կարողանար գտնել ամիսը միանգամ, երկու ամիսը մի անգամ, երեք ամիսը մի անգամ ցոյց տալ իր նուիրատու ընթերցողներին թէ՛ ահա՛ ձեր տուած փողերով ձեր սիրած Հայաստանը ի՞նչպիսի բարօրութեան է հասնում: Բացի տարեկան, իսկ երբեմն էլ որ և իցէ մի օգոյնի տեղեկութիւններից և Պոլսի գործիչները մեզ ոչինչ չեն տուել. առում եմ օգոյնի տեղեկութիւններ են տուել մեզ, որովհետեւ երբեք որ և իցէ ուսումնարանի պատերի միջից դուրս եկած կենդանի նաւակ մենք չենք ստացել, որով իմանանք զիցուք թէ որտեղ է Ք. Գ. Դ. որ Վիլայէթում, որ Սանջաքում, որ Օփայում, որ Նախիջևնի կայ այդ դիւղի, քան թէ գիւղաքաղաքի մէջ, ինչո՞վ են պարապում նորա բնակիչները: Ի՞նչ բերքեր են հասնում այդ երկրից, ի՞նչ ազգաբնակչութիւն (բնակիչ) կայ նորա մէջ, ո՞րն է ժողովրդի նիւթական գրութիւնը, ինչո՞վ կարելի է նորա նիւթական գրութիւնը բարեւել: Ի՞նչ բերքեր կարելի է ազնուացնել ժողովրդի հարստութեան նպաստելու համար. որչափ երեւայք կայ նախալրութա-

պատճառով նրանց լեզուն ենթարկվում է մեծ փոփոխութեան:

Մեր ծոյլութիւնը և անգործութիւնն է պատճառ, որ ժողովրդի երգերը, նորա բանաստեղծութեան թանգաղին պտուղը, կորչում է և ժամանակաւ մոռացվում: Այսպիսի իրողով մենք զորկում ենք հետաքրքրի նիւթից, որը կարող է մեզ ծանօթացնել նորա բանաստեղծական կեանքի հետ:

Ե) ԻՊԵՐԻԱ (ИДИЯ)

Վիր (ուս) ու վիր դանդաղ ընցանք (անցանք) ալ հաքած կարմիր. Մէլքոնից դուռով ընցանք ալ հաքած կարմիր. Նիւրանի բաղի մէջին ալ հաքած կարմիր. Կարօին քնած տեսանք ալ հաքած կարմիր. Մարանին մօտին նստած ալ հաքած կարմիր. Մաղի քողին (քողն) էրեւսն ալ հաքած կարմիր. Բուշակով (երկարամաղ) տղէն գոյլին ալ հաքած կարմիր. Բաղդադին ձեռին բռնած ալ հաքած կարմիր, ձանջերին քշող տեսանք ալ հաքած կարմիր: Ահա այս երգի բովանդակութիւնը. գիւղի աղջիկները գուզված, զարդարված «ալ ու կարմիր հաքած» անցնում են Մէլքոնից դուռով և նկատում են հետեւեալ տեսարանը: Մէլքոնի որդի Կարօն քնած է ծիրանի այգու մէջ, իս նրա նշանած Մարանը նստեցած գոյլին իր տղէն և Բաղդադի աղւորը ձեռին բռնած քշում է անուսու. երեսից ձանջերը: Ահա գիւղացու կարծիքով ամենաբազմապատկեր, ամեն երկաւարաւոր իրեն բովանդակութիւնը. համարում ենք, որ կարող է դառնալ աշխատանքից յետոյ դուռը դնել իր նշանածի ծնկան վրա և քիչ հանգստանալ ծառի շուքում: Սիրելի նշա-

Խաբէզանս եղել եմ,*) Գուշիս պոչը դեղել եմ,**) Աղջիկ սիրելու սէրից, Ընչի (ինչու) ես չուտ պաղել եմ. Մէլքոն եսնի է***) շամից Սեւին է զինդ ծիրանքից, Կոտրելուց ա՛հ չուսեմ, Պոճեկ եմ աշխարհի (աշխարհ) զամից (հոգս): Էս տարի բերքով տարի, Դատ եմ ցանեմ ես գարի, Եթամ (երթալ) մօրս աղաչեմ Ընձի մէկ աղջիկ ծարի: Բացի քանանանդի և սէւորի երգերից կան ևս գութնաւորի (արօրաւոր), Վէրկաւորի, Զօղաղի (զոմէլ արածացող) և հօվուր անթիւ. և զանազան երգեր, Զայ դիւղացին ոչինչ աշխատանքի ձեռն չէ գցում առանց երգի: Ահա այս պատճառով է թէ գնաք դաշտը՝ օրվայ, գիւղերվայ ամեն ժամում դուք կը լսեք ինչպէս օրիորդները—այդ հայոց սիրելիների, այնպէս ևս զանազան աշխատաւորների երգերի ձայնը: Ամեն տարի չարագրում են նոր երգեր. երգը մէկ գիւղից հասնում է միւսին, մէկ գաւառից միւսը, Զէ անցնում մի քանի ամիս և դուք յանկարծ, օրի նախի համար Ուշաուսեաց գաւառի երգը լսում էք երկանայ նահանգում: Ամեն գաւառ այդ երգերը համեմատաբար է իր բարբառին, այս

*) Խաբէզանը իւզում են որ կտուղ լինի և գումէներին խփելուց շատ չը ցաւացնի: ***) Եթէ գումէլ ձեռքաւոր և փունջը սպիտակ են, գիւղացիներն համար կարծեցնում են հիւնայն: ***) Եսնի մի և նայն է ինչ և սայլի Կուշաւոր: այն երկու փայտը, որոնց վրա կառուցված է բուշակը սայլը:

րանները մէջ. քանի՞ նախարարներ կայ. ինչ պիտի ընեն (հիմնադիր) դասա-
տարիւնը մէջ. որո՞նք են դասատուները.
ի՞նչ դաստիարակութիւն են ստացել իրանք
դաստիարակողները, և այլն և այլն: Թող ըն-
թերցողը չը սարսափէ, որ այս ամենը գրե-
լի հնշտ է, քան թէ այն դարձակ փիլի-
սոփայութիւնները, որոնցով լցնում է իւրա-
քանչիւր Կ. Պօլսեցին իր յօդուածները և
նաև մասնաւոր խօսակցութիւնը
Մինչդեռ փոխանակ այսպիսի բաներ մեզ
տալու, որով կարելի կը լինէր նախ՝ ծանո-
թացնել Ռուսահայերին իրանց սիրած Հա-
յաստանի ժողովրդագրութեան, տեղագրու-
թեան և հասարակական դրութեան ու
պայմանների հետ, երկրորդ՝ աւելի մեծ և
եռանդալից նպաստներ ստանալ. Կ. Պօլսի
գործիչները միայն ասել են մեզ. «Ընտե-
կայ «Արարտաբան», «Միացեալ», «Ռուսու-
նասիրաց», «Արուեստասիրաց», «Հայրենա-
սիրաց» և չը գիտեմ էլ ինչ փութն ու ու-
ռօցիկ ընկերութիւններ, որոնց կանոնա-
դրութիւնը այս է և նպատակը ի հարկէ
շատ մեծ բան մ'է՝ Հայաստանի մտաւոր,
բարոյական և նիւթական վիճակը բարւո-
քել: «Մէկը հարցնէ՝ ո՞ր Հայաստանի,
այն Հայաստանի, որին ոչ իրանք են ճա-
նաչում և ոչ մենք: Պարոններ, մի՞թէ Բօս-
ֆօրի ամերիկացի նստած, առանց մի հիմ-
նաւոր տեղեկութիւն ստանալու, առանց
մասնագիտաբար Հայաստանը ուսումնա-
սիրելու, կարելի՞ է թղթի վրա լուսաւորու-
թեան ծրագիր կազմել և համ մեզ սնտի
յոյսերով կերակրել, համ էլ ձեզ. առ խօսմ
զուարճութեան ասպարէզ չէ, որ բեղիկի
(թղթախաղ) փոխանակ «Հայաստանի լու-
սաւորութիւն» ասված խաղալիքը հնարել
ու գործնով ժամանակ անցնել Բայց
թողնենք այդ ամենը, դարձեալ ցանկալի է
իմանալ ի՞նչ երեսով են Կ. Պօլսի գործիչ-
ները մեզինց նիւթական նպաստների սպա-
սում, երբ իր ա կ ա ն Հայաստանի վրա
(այլ ոչ այն վերացական, որի վրա այնչափ
լաւ ստանաւորներ են գրում Կ. Պօլսի
«Հայրենասէրները» իրանց փառաւոր քէօշ-

քերի մէջ), մեզ ոչինչ տեղեկութիւն ոչ
տուած են և ոչ էլ տալիս են: Այս բանի
վրա հարկաւոր էր մտածել մի որ և է
ժամանակ թէ ոչ. . . .

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈԼՈՍԵՍԻՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 22-ին հասաւ Թիֆլիս Նորին Բարձ-
րութիւն Մեծ Իշխան Նիկողայ Միխայլովի:

«Толосъ» լրագրին գրում են Թիֆլիսից հետե-
ւեալը՝ Հեռագիրը հաղորդեց որ Միջազգային
ժամնախօս է յայտնվել Նիչպէս յայտնի է Մի-
ջազգային գտնվում է Թիֆլիսը Հայաստանի սահ-
մանի վրա: Եթէ չընդունենք որ Թիֆլիսը վար-
չութիւնը այնքան ծարպիկ և եռանդոտ կը լի-
նի ժամնախօսի գէպի Հայաստանը անցնելուն
արգելելու համար, այն ժամանակ այդ անոր
կարող է անցնել և մեր Անդրկովկասեան սահ-
մանները: Բայց մինչև այժմ ոչինչ չենք լսում որ
միջոցներ գործ դրվեն ժամնախօսի մեր սահմա-
ններ անցնելուն առաջն առնելու համար:

Վարչապետը «Московск. Телеграфъ» լրագրին
գրում են որ դիտաւորութիւն կայ՝ մի քանի վե-
րանորոշութիւններ կատարել Լեհաստանի ուսում-
նարանների մէջ: Գլխավորապէս և իշխական
դպրոցներում լեհական լեզուի դասաւորութեանը
աւելի մեծ նշանակութիւն կը տրուի. փոխանակ
շաբաթական 12 ժամ, դիտաւորութիւն կայ 18
ժամ նշանակել լեհական լեզուի ուսումնասիրու-
թեանը: Լեհական լեզուի դասաւորութիւնը պար-
տադիր կը դառնայ Լեհաստանի պետական դըպ-
րոցներում: Վարչապետը համալսարանում հիմն-
վում է լեհական գրականութեան մի ամբիօն և
այդ առարկայի համար արդէն նշանակված է մի
պրոֆէսոր:

Լրագիրները հաղորդում են, որ Կազանի նախ-
կին նախագահատե Եկատրինովն արած դիմում-
ների, կամայականութեանների և անիրաւութիւն-
ների դատաստանական քննութիւնը արդէն ա-
ւարտված է և Սկաբլաւինի դէմ կազմված մե-
ղադրական ակտը արդէն ստորագրված է սենա-
տից: Դուռով, ինչպէս լսվում է, այդ գործը կը
քննվի սենատում: Սկաբլաւինի պաշտպան, ա-
սում են, լինելու է Մոսկվայի երդուեալ հաւա-
տարմատար Խարիտոնով:

Ս. Պետերբուրգում այս օրերս կայանաւորված

Սօֆիա Պետրովսկայա, ինչպէս յայտնվել է, պատ-
կանում է իր ծագումով և իր ազգակցական կա-
պերով հասարակութեան բարձր շրջանին: Նրա
ցուցումներով լրացվում է մնացած քաղաքական
յանցաւորների գործի վերաբերութեամբ կազմ-
ված մեղադրական ակտը: Լրագիրներից ոմանք
կարծում են որ այդ կնոջ գործը կը քննվի միւս
յանցաւորների հետ միասին, իսկ ոմանք կար-
ծում են որ ջոկ կը քննվի:

Այն անձը, որ Թագաւորի դէմ երկրորդ անգ-
էր գցել, մոռաւ Կոնիւնչենեան հիւանդանոցի մէջ,
առանց յայտնելու իր ազգանունը, այնպէս որ
մինչև այժմ ոչ ոք չը գիտէ թէ նա ով է եղել:
Նրա հիւանդանոցի մէջ քննվել մի քանի անգամ
հարցրեց վրաւորակներին նրա ազգանունը, չարա-
գործը երկու անգամ պատասխանեց չը գիտեմ,
փակեց աչքերը և այնուհետև ոչինչ չը խօսեց:

«Моск. Вѣд.» լրագրի մէջ Կառվովը մեղա-
դրում է լեհացիներին, աշխատելով նրանց վրա
ստուեր գցել և պարզ անհարկում է սր վերջին
կողմնադրութիւնը թեւադրված է եղել լեհա-
ցիներից: Այդ անամօթ մեղադրանքին լեհացի
մի յայտնի ազնւական, մարիկի վեկուպովի
«Порядокъ» լրագրում տպված բաց նամակով
այս օրերս պատասխանում է Կառվովին, պաշտ-
պանելով լեհացիներին:

Մոսկվայի լրագիրները հաղորդում են, որ այդ
քաղաքի Լուբլանսկի անուանված իգական դըպ-
րոցը, որի դասընթացը կատարվում էր կլասի-
կական գիմնազիաների ծրագրի չափով, այժմ
թոյլութիւն ստացաւ ընդարձակել իր ուսման
ընթացքը պրոգրամը:

Լրագիրները լսել են որ Թագաւոր Կայսր Ա-
լեքսանդր Ալեքսանդրովի թագադրութիւնը կը
կատարվի սեպտեմբեր ամսին:

Մոսկվայի ընդհանուր ուսուցաց արուեստագոր-
ծական հանդիսի բացման օրը դեռ են որոշված
չէ:

«Минута» լրագիրը հաղորդում է, որ ներքին
գործերի մինիստր, կոմս Լօբա-Մէլիքովի առող-
ջութիւնը խախտված է: Անձինք, որոնք մօտ ծա-
նօթ են կոմսի հետ, հաւատացնում են որ վեր-
ջին տխուր անցքերը ներգործեցին նրա առող-
ջութեան վրա վնասաւոր կերպով: Ասում են
որ առաւօտները, մասնաւոր, կոմսը իրան վատ
է զգում և շատ անգամ արիւն է թքում:

Ս. Պետերբուրգում այս օրերս կայանաւորված

Բոլոր ուսու համալսարանների ուսանողները
իրաւունք ստացան հիմնել ընթերցարան, գաւ-
ձարան և ճաշարան: Գաւձարաններ հիմնելու
համար ուսանողները պէտք է չըջանան իրա-
բաժանվեն և ուսանողական իւրաքանչիւր շըր-
ջան պէտք է ունենայ մի պրոֆէսոր որպէս շըր-
ջանի առաջնորդ:

Կազանի համալսարանի ուսանողական ըն-
թերցարանը Ռուսաստանի գրեթէ բոլոր խմբա-
գիրներից ձրիապէս լրագրներ և ամսագիրներ
ստանալով, յայտնել է լրագրով իր շնորհակա-
լութիւնը բոլոր նուիրատուներին:

Մեզ հաղորդում են Գերբէնդից գլխաւոր կեն-
սական պիտույքների հետեւեալ գները: Ալիւրի
պուլը արժէ 90 մինչև 95 կօպ., գարին 65
կօպ., ոչխարի մսի ֆունտը 10 կ., տաւարի
մսի ֆունտը 8—10 կ., խոզ արժէ 11 ր. 50 կ.,
մինչև 12 ր. պուլը, թխած հացը 3 1/2 կօպ.:
Առետուրը շատ ս ու ս ա է անցնում վաճա-
ռականների համար:

Բաշ-Շօրազեալից մեզ գրում են: «Առաքել
Փաւլոսեանց արդէն պատրաստվում է իր սե-
փական ծախսով շինել տղայոց համար մի դըպ-
րոց, որ լինելու է երեք սենեակից: Գաղտնի
շինութեանը մասամբ պիտի օգնէ և հասարակու-
թիւնը: Հին դպրոցը վճռված է գործ դնել
օրինաբար դպրոցի համար:

ՆիՆԵՍԵԱՆՑ մեզ գրում են: «Քանի մի օր
սրանից առաջ մի երևանցի հայ, Բարսեղ Շահ-
պաղեան, սպանվեցաւ: Անգլիական աղբիւր ան-
յայտ չարագործների ձեռքով: Ապանութիւնը,
ասում են, փողի պատճառով է եղել: Նրա սպա-
նութեան լուրը տարածվեցաւ քաղաքում, ա-
մենք շտապեցին անգլիական աղբիւր, իսկ
հաճախակի տեսնելու համար: Ապանվածը 30
տարեկան երիտասարդ է: Գուր էլ նրա ազգա-
նունը յիշելիս կը լինէք, քանի որ նա միշտ
կղել է «Մշակի» բաժանորդ:

«Մշակի» ներկայ համարում արտատպում ենք
Կ. Պօլսի «Մասիս» լրագրից պ. Գրիգոր Նիկո-
ղոսեանի մի յօդուած «Ռուսահայ և թիւրքա-
հայ» վերնագրով: Դա յօդուածի առաջին մասն
է, իսկ երկրորդը կը տպենք հետեւեալ համարում:

«Толосъ» լրագրում կարդում ենք, որ մար-
տի 14-ին Մոսկվայի հայերի պատգամաւոր-
ութիւնը հասաւ Ս. Պետերբուրգ և նոյն օրը
նրան թոյլ տրվեցաւ երկրպագել Թագաւոր

նաճի ծունկն նրա համար աւելի փափուկ է
քան թէ «աթլազէ բալիւն»*) Այս երգը համեմա-
տացնում են ամեն մի երիտասարդի, երբ կամե-
նում են նկարագրել և գուշակել նրան մի բող-
դաւոր ապագայ: Վերջին դիպուածքում Մէլքօնի
տեղ գործ են ածում երիտասարդի հօր անունը,
կարօր տեղ երիտասարդի և Մարանի տեղ նրա
սիրածի անունը:

Բ. Էլեգիա (Элегия)
Պանդուխտ հարսի երգը:
Ղարիպ կաքաւ եմ ձնով սարէն,
Աչքիցս թափվում արտասուք արուն,
Թագանքմե սրտիս ետքէն:
Քամի, արի հերանցս (հայրենաց) սարէն,
Մէ խաբար բեր իմ մօրէն:
Բլրու էի հերանցս բաղին,
Գլխիս քցին (ձգել) կարմիր մաղին.
Բերին դրին էս զաֆաւը (վանդակ),
Ջիգարս չըջով (չամփուր) դաղին:
Գըշեր ցերէկ լաց ու սուք,
Էրեսիս կիսուրիս թուք,
Մէ ուրախ օր չը տեսայ,
Հերանցս դարձի *) օրէն:
Սարարի (պատճառ լինող) օջախն հանգնէր,
Տունը կամընտց *) դռներէր:
Բէրանք փակվէր, չօրներ,
Չը գէր (գար) մօրս ասէր:

*) Բաղիւ նուրբ փետուրով լքցած բարձ:
*) Քաւաստուն օր հարսանիքից յետոյ նորա-
պառկ հարսին ծնողը բերում են իրենց տուն:
Այս հրաւերքը անուանվում է «հերանց դարձ»:
**) Կամընտց նշանակում է աւերակ: Կանամըք
ցանքում են բոս մեծի մասին աւերակներում:
Ուստի լուռնի կամընտց դռնայ, այդ նշանա-
կում է տունը աւերակ դառնայ:

«Աղջիկդ տուր Միօնն»:
Սարաք, աղի տէր չըլինես:
Հարսի էրէս չը տեսնես:
Հասարթով (փափաք) ֆողը մանես,
Գէրէզմիրը դիմ չը պարկես:

Այս երգը մեզ ծանօթացնում է պանդուխտ
ու իւր կամքին հակառակ մարդու տուած հարսի
դրութեան հետ: Հարցը յիշում է իր կրօնու-
թեան օրերը, երբ նա տարի կաքաւի և այդու
ստիակի պէս աղաւ էր: Մարդու գնալուց յե-
տոյ նրա ազատութեան վերջը հասնում է, և
կէսրանց տունը, հարսի համար «վանդակ» է:
Հարցը ունի աւելի զանգաւորու, որովհետև
հէնց առաջի «գարնի» օրից, բացի կէսրոյ նա-
խատիքից, նա ոչ մի ուրախ օր չէ տեսել:
«Գիշեր ցերէկ լաց ու սուք», Էրեսիս կիսուրի
թուք» բառերը շատ լաւ ցոյց են տալիս նրա
դրութիւնը: Նա արտում է ու տրտում հերանց
տան վրա և խնդրում է քամուց «մի խաբար
բերի նրա մօրէն»: Հարսի անբաղտութեան
պատճառը դեպքան է, որ առաջին անգամը
խորհուրդ տուեց հարսի ծնողաց նրան ծաղ
Միօնն»: Ահ ինչ պատճառաւ անբաղդ հարսը
սարսափելի անէծք է թափում դեպքանի գլխին.
«Թող դեպքանի օջախը հանգչի, տունը աւերակ
դառնայ: Թող նրա բերանը չորանար և փակ-
վէր, որ նա չը յորդորէր հարսի մօրը «աղջիկը
Միօնն տայ»: Թող դեպքանը ոչ որդու և ոչ հար-
սի երես տեսնէ: Թող նրա փափաքը սրտին մնանի
և գերեզմանումը հանգստութիւն չը գտնի:
Ե) Ն ր զ ի ծ ա ր ա ն ա կ ա ն Ե ր գ (сатра):
Ս...նը դալվաթը (հարստութիւն) տուեց ճա-
նիսն*)

*) Ճան նշանակում է վէգ: Տալ ճանին նշա-
նակում է տանել տալ (пронять):

Վայն էկաւ գլխին ու ջանին:
Քօլեց (զաղթել) իր տնով ու տեղով,
Գնաց, հասաւ դամշով (КАМЫШ) փռօզով:
Ս...նը էլաւ գեղի գլաւ (глава),
Չօլախ (կող) Մստօրն արաւ սուրեա (судья).
Կարօցին էլ դրեց իւր միջոյ (զրադիր),
Դիօն էլ էլաւ գեղի համբայ:

Առէջ (առաջ) խալիս (ժողովուրդ) օրն էր լալում,
Աղքատներին սրտ տալում (քաջալերել).
Ասում էր. «Քանի են օտը եմ (կենդանի),
«Չեղ որդուս նման կը պահեմ»:
Չարը (վրան) տնկեց փռօզով յիմանին (սէղ),
Մէ դառը իջաւ արաղի ջանին, **)

Ասաւ. «Կարող, ճաները բեր»,
«Ուղղմեմ խաղալ էս դիւեր»:
Դ...նցիք էկան ժողով,
Իրար ասեցին ահով դողով,
«Աստուած ձեր տունը քանդի»,
«Ս...նը մեզ բերեց ֆանդի *) (խորամանկութիւն),
«Ս...նը կէրաւ **» մեր փողը,
Մեր գլխին տուեց սև խողը,
«Էլէք էթանք (երթալ) Դ...գեղը»,
«Էն տեղ լաւ է քանց էս տեղը»:

Որպէս զի ընթերցողը կարողանան մի պարզ
գաղափար կազմել այս երգի մասին, մենք հարկա-
ւոր ենք համարում բացատրել ինչ առիթով է
նա չարագրված: Դ... գիւղումը կայ մի
պարոն Ս... անունով: Ս... ինքն աղքատական
է և առաջ շատ հարուստ էր. բայց զժաղդա-
բար նա անձնատուր եղաւ թղթախաղին, «վե-
ղախաղին», այնպէս որ բոլորովին վատեց իր
*) «Մէ դառը իջաւ արաղի ջանին» ստախկ
խմել արարը:
**) Փանդի բերել — որդայթ դնել մէկին:
**) Ուտել փողը նշանակում է վատնել:

հարստութիւնը: Այս անբաղտութիւնից յետոյ
նա վճռեց զաղթել փռօզ (մի աւերակ Արաքսի
աջ ափում) որպէս զի այնտեղ սկսի նոր
կեանք: Ս... հետ զաղթեցին մի քանի տուն
Գ... գիւղից: Գաղթականները ժողովել էին և
յանձնել Ս...ին մի գումար: Այս վերջինը վառ-
նեց աղբ գումարը եւ, — մասամբ տանել տուաւ,
մասամբ «տուեց արաղի»: Գաղթականները տես-
նելով Ս... խաբարայութիւնը, կրկին վերադար-
ձան Գ... գիւղը: Գ... գիւղացիք չարադրեցին
զաղթականների վրա այս երգը ու մինչև այսօր
ծիծաղում են նրանց վրա: Մենք այստեղ բե-
րում ենք երգի միայն մի մասը,

h) Մ է ս ա կ ա ն Ե ր գ Ե ր գ:
Հ ա ր ա ն ի ք ի Ե ր գ:
Բուն Հայաստանի գիւղերում սովորութիւն
կայ գովել *) փէսային կամ ինչպէս ռամիկ ժո-
ղովուրդն է ասում «թագաւորին», թագաւորին
լոյգանելուց և հարսանեաց չորեք հազանելուց յե-
տոյ կանգնացնում են սան մօտ այն տանը, ուրտեղ
ժողովուած է բոլոր հրաւիրված բազմութիւնը:
Տղամարդիկ կազմելով մի պարաշրջան, պտուտ
են գալիս թագաւորի չորս կողմով և ի պատիւ
նրան զանազան երգեր երգում: Երգելուց յետոյ
թագաւորի քոյրը կամ հարսը (եղբօր կինը) կամ
մի ուրիշ կին նրա ազգականներից վեր է առ-
նում մի կանաչ և կարմիր աղլուկ և պարգե-
ւուց յետոյ խրում է խաչաձև թագաւորի եւ-
թէն արխաւուղի տակ: Այդ աղլուկները անուա-
նում են «կօղանդ», ուստի և հանդէսը ինքը կօ-
ղում է «կօղանդ կապել»: Ահա թագաւորի գո-
վաւանքի երգերից մի քանիսը:

*) Այս հարցով հետաքրքրուողներին խնդրեմ
կարդան մեր յօդուածը «Հարսանիք» վերնագրով
«Մշակի» վերջին համարներում 1872 թ.:

կայսրի մարմինը, որի դադարը վրա հասնելը զրեցին մի չքեղ արծաթեայ պատի, ժապաւենեկ-
րով զարդարված, հետեւալ արձանագրութեամբ.
«Թագաւոր—Ազատողին, Ալեքսանդր II-ին, Հա-
յոց եկեղեցու մեծ Հովանաւորին»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳՂԱՍ

Լրագրիւններ մէջ կարգում ենք հետեւեալը: Հասարակութիւնը Անգլիայի մէջ այժմ շատ վատ է տրամադրված: Ազատա-
միտները, անդադար անաջողութիւնների հանդիպելով, իրանց անպատեւած են հա-
մարում: Դեռ մի տարի չէ անցել այն ժա-
մանակից, երբ ընտրողական յաղթութիւն-
ները նրանց մէջ ամենամիայնուն յոյսեր պար-
թեցրին: Ազատամիտ քաղաքագէտների ու
քաղաքական բաժանում էին նրանց կող-
մակիցները բոլոր քաղաքների և գիւղերի
մէջ: Կլաքստոնի խոտացած վերանորոգու-
թիւնները պէտք է եռանդով իրագործվէին,
իրանդան պէտք է բաւականութիւն ստա-
նար, անգլիական Ֆինանսները պէտք է կա-
նոնաւորվէին, առեւտուրը պէտք է ծաղկէր
և այլն: Բայց դրա փոխարէն կառավարու-
թիւնը անաջողութիւնների հանդիպեց:
Անգլիացիները թողնում են Աֆգանիստանը
ոչ թէ իրանց կամքով, որովհետեւ ազատա-
միտ կառավարութիւնը չէ հաւանում իր
նախորդի քաղաքականութիւնը, այլ որով-
հետեւ Անգլիան յաղթվեցու Ասիայի մէջ:
Աֆգանական պատերազմը առաջ գնահատ-
ված էր 1,200,000 Փոնտ ստերլինգ, իսկ
այժմ այդ գումարը հասել է 20,000,000-ի:
Նոյնը պատահեց և Տրանսկապի հետ:
Եթէ մի տարի առաջ այդ երկրին անկա-
խութիւն տրվէր, ամենքը կասէին, որ ա-
զատամիտ կառավարութիւնը անիրաւացի է
համարում իր նախորդի քաղաքականու-
թիւնը, բայց այժմ ամենքը համոզված
են, որ բոնրները ձեռք բերին իրանց ան-
կախութիւնը երեք անգամ անգլիական զոր-
քերին յաղթելուց յետոյ:

Բացի այդ իրլանդիայի գործն էլ գեռ

վերջացած է: Ամենքը հասկանում են, որ
համայնքների ժողովը գործ կունենայ 45
կամ 50 իրլանդացի պատգամաւորների հետ,
որոնք կամենում են արգելք դնել գործերի
կանոնաւոր ընթացքին: Մի և նոյն ժամանակ
իրլանդացի պատգամաւորները ուժեղանում
են և կողմնակիցներ են գտնում:

Ռուսաց կայսրի սպանման լուրը հաս-
րակութեանը յայտնվեցաւ մարտի 2-ին:
Հանգուցեալ թագաւորը հեղինակութիւն
չունէր անգլիական ոչ մի կուսակցութեան
առաջ, բայց վերջին տարիները ամենքը նը-
րան համարում էին Նրա կեանքի դէմ ուղ-
ղած սպանութեան փորձերի պատճառով:
Կարելի է հաստատապէս ասել, որ ամենա-
յեղափոխական անգլիացիները, ինչ դասա-
կարգին էլ նրանք պատկանէին, դատա-
պարտում են կայսրի սպանութիւնը իբրեւ
քաղաքական միջոց: Ամենաֆանատիկոս ան-
գլիական սոցիալիստները երբէք չեն առա-
ջարկում և չեն արդարացնում այդպիսի
միջոցներ: Սրա պատճառը ոչ թէ յարգանքն
է դէպի ուրիշի կեանքը, կամ բարբի և
բարոյականութեան նրբութիւնը, այլ մա-
մուլի, հասարակական ժողովների և ըն-
կերութիւնների կոտորեալ ազատութիւնը,
որ վայելում են անգլիացիները և որ խան-
գարում է դադանի դաւադրութիւնների
կազմվելուն: Անգլիայի մէջ ամենաարմա-
տական և ֆանատիկոս մարդիկ բացարձակ
քարոզում են իրանց վարդապետութիւննե-
րը: Վաղուց ամենքը համոզված էին, որ
թագաւորի վախճանը Եւրոպայի մէջ մեծ
փոփոխութիւնների տեղիք կը տայ, այդ
պատճառով ամենքը անհանգստութեամբ
հետեւում են քաղաքական գործերի ընթաց-
քին:

ԹԻՒՐԻՒՄ

Բ. Գուրը վերջապէս յայտնեց այն պայ-
մանները, որոնցով նա համաձայն է վեր-
ջացնել յոյն-թուրքական սահմանական վե-
ճը: Թուրքաց կառավարութիւնը համաձայն
է գիշանել Գոնաթափին Կրիտ կղզին Բեր-
լինի կոնֆերանցիայից որոշված խախտի
մասերի փոխարէն, բայց Թէսալիայի մէջ

թեմա: Իսկ չարեք բացի արեգակից ժողովը-
ղական լեզուով նշանակում է «կեանք»: Միշտ
կարելի է լսել այսպիսի բառեր չարեղ կանան-
ցի, «կանանց արեգակնային» այսինքն կեանքը
նորոգելի և երկարի:

Բացի թագաւորի գովադանքից մի առանձին
երգ նուիրում են հարսնացուի և սկեսուրի
անձնական յարաբերութիւններին և տնտեսական
դրութեանը: Կիսովով կեսուրին ասում են.

«Թագաւորի մեր (մայր) դուռ արի
«Տե՛ս քեզ ընդ (նշ) եմ բերն (բերել)
«Ընչե՛ր մնչե՛ր») եմ բերն,
«Բե՛ր գեռի (լիճ) դաղ (սաղ) եմ բերն,
«Լիզու՛ն (կողո՛ւ)») կէս գաղ եմ բերն.
«Թո՛նիր վառող եմ բերն,
«Փոչի՛ն հանող եմ բերն,
«Բե՛ր հաց թխող եմ բերն,
«Խմոր անող եմ բերն
«Բե՛ր չոր կարող եմ բերն,
«Գլո՛ղ լուացող եմ բերն:
«Քախան անող եմ բերն,
«Ցորեն մաղող եմ բերն,
«Երբ վերջանում է հետեւալ բառերով:
«Բե՛ր թառ թաղալ (նոր ու թարմ)
«Նոխու՛ղ մաղալ») եմ բերն:
Բացի այս տողերից երբեմն ավելացնում են...
«Ոտերեղ լուացող եմ բերն.
«Ձուրը խմող եմ բերն:

*) Մնչեր անձնատմ ինչե՛ր բառն է.
**) Լիզու՛ն կէս գաղ նշանակում է երկարա-
լեզու կամ ուսմիտ: «Լիզու՛ն» լիզու՛նների
անուանվում է այն կինը, որը հնազանդ չէ և
միշտ հակառակում է իր մեծերի կարեւր:
*) Նոխու՛ղ առանձին տեսակ պատրաստած
սխտրն է, որը գործ են անում քաղցրեղէնի
մաղալի տեղ:

իր զիջումները սահմանափակում է այնպէս,
որ Լարիսա և Վօթ Թուրքիային մնայ:

Հասկանալի է, որ Գոնաթափին չէ կա-
րող բաւականապէս այդ զիջումներով: Եթէ
Խալիքով ձեռք բերելը յունական կառավա-
րութեան համար ազգային ինքնասիրու-
թեան հարց է, մի և նոյն ժամանակ Թէսա-
լիայի միացնելը Գոնաթափին հետ պա-
հանջում են այդ երկրի տնտեսական շա-
հերը: Կրիտ կղզին չէ կարող փոխարինել
այդ կորուստները: Աւելի քան թէ կէս
գաղափր փորձը ապացուցեց, որ Գոնաթա-
փին չէ կարող տնտեսական կողմից ծաղկել
և զարգանալ այժմեան սահմաններով շըր-
ջապատված: Թէսալիայի այն մասերը, որ
Բերլինի կոնֆերանցիան վճռեց տալ Գո-
նաթափին անհամեմատ հարուստ են բնա-
կան արդիւնաբերութեամբ, քան թէ Կրիտ
կղզին և անհամեմատ յարմար են ծովային
առևտրի զարգացման համար: Խալիքով և
Թէսալիայի մի մասի փոխարէն Կրիտ կղզ-
ու ստանալը ոչ թէ միայն ֆեոսական կը
լինէր Գոնաթափին համար, այլ և բաւա-
կանութիւն չի տալ այն յոյսերին, որոնց
պատճառով յոյները առանց մտածելու, մեծ
զոհաբերութիւնների գնով ստեղծեցին ի-
րանց զորքերը, որոնց թիւը շուտով 100,000
կը հասնէ:

Ջարմանալի չէ, ուրեմն, որ պետութիւն-
ները Թուրքիայի զիջումները բաւականա-
յաւցիչ չեն համարում և պահանջում են
Գոնաթափին համար Վօթ և Լարիսա:
Յայտնի չէ միայն արդեօք բոլոր պետու-
թիւնները համաձայն են այդ պահանջի
վերաբերութեամբ, թէ ոչ:

Ինչպէս երևում է, պետութիւնների բա-
նակցութիւնները Բ. Գրան հետ վերջանում
են: Կ. Պոլսից հաղորդում են, որ երկու
կամ երեք նիստի համար գործեր են միա-
ցել: Պէտք է ի նկատի ունենալ, որ սկս-
ված բանակցութիւնների նպատակն էր ու-
րշել այն զիջումները, որ Բ. Գուրը մտա-
գրել է կամաւորապէս անել յօդու Գոնաթա-
փին: Այդ հարցը վերջացնելուց յետոյ
դեպքանկը պէտք է որոշեն, թէ պե-
տութիւնները ինչպիսի զիջումներ բաւական
են համարում Գոնաթափին համար և թէ
Բ. Գուրը ի՞նչպէս կը վերաբերվի նրանց
պահանջներին: Այնուհետեւ պետութիւն-
ները պէտք է համաձայնութիւն ստանան
Գոնաթափին, որ նա կընդունի նրանց ա-
ռաջարկութիւնը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 21 մարտի: Մասկայի
աշխարհանդէսը յիտաձգված է մինչև եկող
տարի: Գտնվեցաւ մարտի 1-ի եղեռնագոր-
ծութեանը վեցերորդ մասնակցողը, որ Ե-
կատերինսոյսովսկայա նահանգի բնակիչ է,
Նիկոլայ Կրեպլին, քահանայի որդին: Նա
խոտովանվեցաւ, որ մարտի 1-ին զգած և
Տիւրքիայ փողոցի մէջ գտնված ուռմիրը
ինքն է պատրաստել: Մարտի 26-ին նշա-
նակած դատարանը չարագործների մասին
յիտաձգված է: Երեկ ընտրվածներին քա-
ղաքական խորհուրդի համար 25 ան-
դամներ ընտրվեցան: Քաղաքական հա-
ղորդեց երկու սկզբնական միջոցները. 1)
Հիմնել սահմանադրւներ (заставы) մայրա-
քաղաքի բոլոր ձախապարհների վրա, 2)
վաւերացնել անցաթղթերը և պոլիցիական
հսկողութիւն ունենալ երկաթուղով մայրա-
քաղաք եկողներից կառքեր վարձելու վրա:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 20 մարտի: Պետական
բանկի 5% տոմսերը առաջին շըջանի ար-
ժէ 96 ռ. 12 կ., երկրորդ 93 ռ. 25 կ.,
երրորդ 93 ռ. 75 կ., չորրորդ 93 ռ. 12 կ.,
նիւթին 5% առաջին փոխառութեան տոմ-
սակը արժէ 225 ռ., երկրորդ 217 ռ. 25
կ., արեւելեան առաջին փոխառութեան
տոմսակը արժէ 92 ռ. 50 կ., երկրորդ 92
ռ. 50 կ., երրորդ 92 ռ. 50 կ., ոսկի 7 ռ.
93 կ.: Ռուսաց 1 լուրը Լոնդոնի վրա ար-
ժէ 24,81 պէնս, Ամստերդամի վրա 125,50
պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա
արժէ 211 մարկ 75 պֆ., Փարիզի վրա
262 ֆրանկ 50 սանտիմ: Բօրայի տրամա-
դրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 22 մարտի: Կառավար-
չական հաղորդութիւն. Մալայա Սալայա
յա փողոցի մէջ գտնված ականի առիթով
քննութիւնը, որի մասին յայտնված էր
«Правит Вѣстн.» լրագրի № 52-ի մէջ,
վերջացած է և յանձնված է ներքին գոր-
ծերի մինիստրին: Սրբուհի այդ գործը շա-
րունակ ուղղութիւն կը ստանայ: Երեկ վախ-
ձանվեցաւ ըստմիական դեպքան Գիկա:
«Голосъ» լրագիրը հաղորդում է. Սեփա-
սոպօրի մէջ կայանաւորված է և կ'հասցրած
է Ողէսա մի երկրամարդ, որ կեղծ բե-
խեր և միբուք ունէր: Ս. Պետերբուրգի
սահմանադրւների մօտ զինուորական պա-
հապաններ են կանգնեցրած:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԴՈՒՆԻ

ցոյց տալ մեր ժողովրդական բանաստեղծու-
թեան և գրականութեան նշանակութիւնը ընդ-
հանուր էսոյոգիական կէտից և, բացի սրանից,
ապացուցանել թէ մեր ժողովուրդը դուրկ չէ
բանաստեղծական ձիւրքից, նրա բանաստեղծու-
թիւնը գնահատելու համար հարկաւոր է անպատ-
ճառ հասկանալ երգերի ներքին միտքը և այն
լեզուն, որով նա արտայայտու է իր սրտի ըզ-
գացմունքները: Այս միտքը և մեր կարծիքը
ապացուցանելու համար մենք բերինք մի քանի
օրինակներ և աշխատեցինք, նրանց քննելով,
բացատրել նրանց միտքը, որպէս զի աւելի հաս-
կանալի լինեն ժողովրդական կեանքին անձա-
նօթ ընթերցողների համար: Այն այս պատճառաւ
մենք աւելի յարմար գտանք նրանց դասակար-
գել:

Խնդրում ենք, ընթերցող, մեր համառոտ աշխա-
տանքին նայէք ինչպէս մի փոքր բանադա-
տական ակնարկութեան մեր ժողովրդական
գրականութեան: Մենք խոտովանում ենք, որ
մեր աշխատութիւնը, ինչպէս առաջին քայլ,
ունի թիրութիւններ, մեզանից աւելի հմուտ
և փորձաւոր անձինք կարող են ապա-
գայում լրակատար և ընդարձակ կերպով
քննադատել մեր ժողովրդական գրականու-
թիւնը և դասակարգել երգերը ինչ որ չը
լինի մեր թիրութիւնները և սխալանքը, բայց
մենք դեռ յօդուածի սկզբումը ասացինք թէ
զգիտութեան թշնամին սխալանք չէ, այլ ան-
գործութիւնը: Ուստի աւելի յարմար և պոս-
շահաւոր ենք համարում զգործել և սխալվել,
քան թէ բոլորովին լռել:

Մասկա Ստոլոմոն Եղիազարեանց

